ծանօթ երկու ճիւղերու բաժնուած են, ինչպէս որ պիտի տեսնենք: Սմբատեան ճիւղէն դատ կար նաեւ Ստեփանիոսեան ճիւղ մը, որուն մասին իր կարգին:

Ստեփանիոսեան եւ Սմբատեան ճիւղերը արենակցական կապէ դատ ունէին եւ խնամիական կապ: Ասիկա ալ պիտի յիշենք իր կարգին երբ Ստեփանիոսեան ճիւղին մասին խօսինք:

Ուրեմն Սահլ Սմբատեանի հօր անունը ծանօթ չէ(12): Մեզի ծանօթ է Սահլի մեծ հօր անունը՝ Սմբատ Հայոց իշխան, մեռած 725ին, կամ դուցէ աւելի ճիշտ՝ Սահլի հօր մեծ հայրն էր այս Սմբատը:

Մենք վերը տեսանք որ Սահղ Սմբատեան Եռանշահիկ 821ին պարտութեան մատնեց Պարտաւայ արք ընտիրք ի Տաճիկաց, զորս նոյնացուցի Բաբակի հետեւորդներուն մէկ խումբին հետ: Մեծիրանց եւ Շաքէոյ սահմաններուն մէջ Շիկաքար բերդին վրայ կը յարձակին այս ասպատակները: Հոս էր որ Սահլի կինը, նորածին զաւակը, եւ կնոջ վանական եղբայրը կը գտնուէին, ինչպէս որ տեսանք վերը: Սահլի կնոջ եւ նորածին զաւկին անունները անծանօթ կը մնան մեզի, սակայն յետոյ պիտի տեսնենք որ Սահլի տղոցմէն մին կը կոչուէր Ատրներսեհ: Ոչ ալ ծանօթ է Սահլի կնոջ վանական եղբօր անունը, որ քաջութեամբ բերդէն դուրս խուժեց եւ նիզակահար ըրաւ բերդը պաշարող ասպատակներուն հրամանատարը: Տեսանք նաեւ որ պաշարման յաջորդ առաւօտ Սահլ հասաւ իր պաշարուած բերդը եւ ցրուեց ասպատակները:

Մեծիրանց կամ Մեծարունիք (Մեծկունիք, Մեծունիք, Միւսհարանդ) գաւառ մըն է, մաս Արցախու եւ Աղուանից: Կը յիշուի Մեծիրանից եպիսկոպոս մը, եւ Խաչենոյ մէջ նշանաւոր վանք մըն է Մեծիրանից վանքը: Մեծիրանից գաւառի սահմանները այն տեղն դուցէ կը հասնէին Արցախի Հարանդ գաւառը, մինչեւ Ամարասի քովերը (Մուղանի դաշտ), ուր Բաբակ իրեն ապաստանարան ընտրեց երբեմն:

Թովմա Արծրունի կը վկայէ որ «Սահլ Սմբատայ որդի, Շաքէոյ տէր» (էջ 310) էր: Շաքէ (Շէքի) բուն Աղուանից հին մէկ գաւառն էր, որուն տէր էր Սահղ Սմբատեան: Շաքէ դուցէ միացած էր Մեծիրանց կամ խիստ մօտ էր: Շաքէոյ եւ Մեծիրանց սահմաններուն վրայ ըլլալու էր Շիկաքար, որ մեր արդի աշխարհագրական տեղագրական գործերուն մէջ անծանօթ կը մնայ: Ըստ իս Շիկաքարի բերդը ըլլալու է Շաքէոյ երկու մղոն հեռու գտնուող ամրութեան մը աւերակները, զոր տեղացիք Գըզըլնա (Շիկագոյն) կը կոչեն: Բերդատեղւոյն աւերակները կ'երեւին եւ կ'արժէր որ հոն պեղումներ կատարուէին մեր պատմութեան այս էջը աւելի լուսաւորուելու համար:

☆

Անանուն Արաբական ժամանակագրական հատակոտոր մը կը վկայէ որ Սահլ որդին էր Ստեփաննոսի քրոջ: Ստեփաննոս՝ Եռանշահիկներու միւս ճիւղէն էր: Սահլի ծննդեան թուականը ծանօթ չէ: Գիտենք թէ ողջ էր 852ին, եւ եթէ մեռաւ՝ բնական չէր իր մահուան պատճառը, քանի որ 852ին Բուղան ուրիշ հայ իշխաններու հետ Սամարայ աքսորեց զինքը: Գիտենք նաեւ որ 821ին արդէն քաջակորով ասպետ մըն էր, ամուսնացած եւ նորածին զաւակի մըն ալ տէր: Դուցէ կարելի է դինքը 790ական թիւերուն ծնած նկատել:

821էն վերջ դարձեալ կը դժուարանանք հետեւելու Սահլի վեանքին: Մակդիսի Արաբ պատմիչը կը վկայէ որ «Սահլ կալա-

(12) Ալպոյաճեան կը գրէ· Ատրներսեհ «Թոռն էր Աղուանից Եռանշահիկ Սմբատ իշխանին եւ որդին Սմբատի՝ Յովհաննէս եւ Սահլ որդիներէն վերջինին» (Պատմական Հայաստանի սահմանները, էջ 171–2): Ալպոյաճեան ապրիւր ունի նշանակած Կաղանկատուացի, Բ. էջ 69: Սակայն այդ պատմիչին քով նման վկայութիւն չկրցայ գտնել: